ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

ԱՐՎԵՍՏ

7-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

2021 Թ

Հայոց գիր

«Հայոց այբուբենը գլուխգործոց է»:
Անտուան Մեյե, ֆրանսիացի հայագետ

Հայոց կամ հայկական գիրը հնչյունային գրանշանների համակարգ է, որն ստեղծել է Մեսրոպ Մաշտոցը 405 թ-ին, ուստի այդ գրերը կոչվում են նաև մեսրոպյան կամ մաշտոցյան: Մեսրոպ Մաշտոցը այբուբեն ստեղծած մինչև այժմ հայտնի առաջին հեղինակն է:

Հենվելով հայագիր հնագույն մատյանների, վիմագրությունների, Մաշտոցի աշակերտներ Կորյունի և Մովսես Խորենացու վկայությունների վրա՝ կարելի է տարբերել հայկական գրի ստեղծման մի քանի փուլ:

Առաջին փուլում Մաշտոցը բացահայտել է հայերենի բանավոր-խոսակցական հնչյունական համակարգը, ապա տարորոշված հնչյունների համար որոշել գրանշանների քանակը: Նրան օգնել են կաթողիկոս Սահակ Պարթևը և բանիմաց այլ անձինք:

Երկրորդ փուլում ստեղծել է հայոց գրերը՝ 36 տառ: Մաշտոցյան այբուբենի բոլոր տառերն ստեղծված են վերից վար իջնող երկար, կարճ ու լայն, ուղղաձիգ և հորիզոնական գծերով: Բաղադրիչների մեջ երկարը հիմնագիծն է, որի աջ կամ ձախ կողմերում կարճն ու լայնը, վերից վար համապատասխան դիրք գրավելով, միանում են նուրբ գծերով:

Երրորդ փուլում Մաշտոցը դասավորել է տառերը, ճշտորոշել է նրանց թվային արժեքները, տվել համապատասխան անուն:

Չորրորդ և վերջին փուլում սահմանել է հայերեն նորաստեղծ գրերի գործածության կանոնները, մշակել գրչության արվեստի հիմունքները:

Ըստ Կորյունի՝ այդ նպատակով Մաշտոցը Սամոսատ քաղաքում հույն գրիչ Հռոփանոսի հետ ձևավորել է հայոց գրերը, ապա Աստվածաշնչից թարգմանաբար գրել հայերեն առաջին նախադասությունը՝ «Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս յանճարոյ»:

Ժամանակակից հայերենն ունի 39 տառ: Արևելահայերենում ւ-ը՝ որպես առանձին տառ, չի գործածվում:

XII դարի վերջերին հայերենի այբուբենը համալրվել է օ և ֆ, XX դարում՝ և տառերով:

Միջնադարում հայոց գրերը նաև նկարազարդել են ծաղկողները (նկարիչներ): Զանազան խորհրդանշական պատկերներով ծաղկած հայոց գրերը դարձել են գեղեցիկի և իմաստավորի կրողներ ու արտահայտիչներ:

Հայկական գիրը հնչյունական-տառային գրատեսակ է և իր կազմով՝ ամբողջական: Կազմված է մեկ հնչյունին՝ մեկ տառ, մեկ տառին՝ մեկ հնչյուն սկզբունքով: Չնայած որոշ փոփոխությունների՝ հայկական գիրը ցայսօր պահպանել է նշված սկզբունքը:

Տառերի համակարգումով, դրանց կառուցվածքով, դասավորությամբ այն ինքնատիպ է,

անմիջականորեն չի պատճենում օտար որևէ համակարգի. այս տեսակետից ևս այն աշխարհի հազվագյուտ տառատեսակներից է: Ինքնատիպությունը երևում է տառերի թվային արժեքների մեջ (տառերը դասավորված են 4 շարքով՝ միավորներ, տասնավորներ, հարյուրավորներ, հազարավորներ): Գործածության մեջ լինելով ավելի քան 1600 տարի՝ հայոց այբուբենը չնչին փոփոխություն է կրել:

Հայկական գիրն աշխարհի ամենակատարյալ ու կենսունակ գրերից է. օգտագործվում է և՛ Հայաստանի, և՛ Լեռնային Ղարաբաղի Հանրապետություններում, Ջավախքում, Սփյուռքի հայկական գաղթավայրերում, մշակութային և հայագիտական տարբեր կենտրոններում:

Հայոց մեսրոպյան գրերով ստեղծվել է հարուստ գրականություն: Այն հին, միջին ու նոր քաղաքակրթությունների գիր է և արժեքավոր ավանդ ունի համաշխարհային մշակույթի գանձարանում:

- ***«Մաշտոցի հրաշալի այբուբենի կատարելությունը զարմացրել է աշխարհի մեծագույն լեզվաբաններին»:***

Էդմոնդ Շուց, հունգարացի հայագետ

- ***Հայոց գրերի գյուտի 1600-ամյակի առթիվ 1962 թ-ին Օշականում կանգնեցվել է հուշակոթող (հեղինակ՝ Ջիմ Թորոսյան), 2005 թ-ին Արագածի փեշին՝ Աշտարակ–Ապարան մայրուղու ձախ կողմում, դրվել են տուֆակերտ, Օշականի եկեղեցու բակում՝ խաչքար (հեղինակ՝ Ռուբեն Նալբանդյան) տառարձանները:***

Մեսրոպ Մաշտոցը հայոց գրերի ստեղծողն է, հայերեն ինքնուրույն և թարգմանական գրականության սկզբնավորողը, հայ գրչության ու հայագիր դպրոցի հիմնադիրը, հայերենի առաջին ուսուցիչը:

Մեսրոպ Մաշտոցը ծնվել է կիսաազնվական Վարդանի ընտանիքում: Ստացել է հունական հիմնավոր կրթություն, տիրապետել է նաև ասորերենին, պարսկերենին, վրացերենին: Մոտ 389 թ-ին հաստատվել է Վաղարշապատում, պաշտոնավարել արքունիքում՝ որպես ատենադպիր ու թարգմանիչ, այնուհետև նվիրվել է ռազմական գործին: 394 թ-ին դարձել է վանական, իր աշակերտների ուղեկցությամբ կատարել է քարոզչական շրջագայություններ տարբեր գավառներում, տարածել քրիստոնեական վարդապետությունը, Աստվածաշունչը բանավոր թարգմանել է հայերեն՝ հասկանալի դարձնելու համար:

Այդ առաքելության ընթացքում նա լրջորեն մտահոգվել է երկրի վիճակով, գիտակցել լեզվի, եկեղեցու, դպրոցի, ավանդույթների և մշակույթի կարևորությունը ժողովրդի ինքնության պահպանման համար. Հայաստանի պարսկական հատվածում (387 թ-ին Հայաստանը բաժանվել էր Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև) հետզհետե ուժեղանում էր պարսկերենի ազդեցությունը, իսկ բյուզանդական մասում հունարենը դարձել էր պետական լեզու: Հայ ժողովրդին ձուլման վտանգից փրկելու նպատակով Մաշտոցը կազմել է հրատապ ծրագիր՝ հայերեն թարգմանել քրիստոնեական գրքերը,

քարոզչությունն ու արարողություններն անել հայերենով, ստեղծել ինքնուրույն հայերեն գրականություն, ամրացնել երկրի՝ 2 մասի բաժանված հատվածների հոգևոր, լեզվական և մշակութային միասնությունը, որը քաղաքական միասնության հիմք պիտի դառնար երկրի պետական անկախությունը վերականգնելու հնարավորության դեպքում:

Մաշտոցի այս ծրագիրն ընդունել ու խրախուսել են Հայոց կաթողիկոս Սահակ Պարթևը և Վռամշապուհ արքան: Վերջինս, տեղյակ լինելով, որ Ասորիքում Դանիել անունով եպիսկոպոսի մոտ հայերեն նշանագրեր կան, պալատական Վահրիճին ուղարկել է դրանք բերելու: Մաշտոցը որոշ ժամանակ այդ տառերով հայոց լեզու է ուսուցանել իր աշակերտներին, սակայն պարզվել է, որ այդ նշանագրերը բավարար չափով չեն համապատասխանում հայերենի հնչյունական համակարգին: Սահակ Պարթևի երաշխավորությամբ և Վռամշապուհ արքայի հրամանով Մաշտոցն իր մի խումբ աշակերտների հետ ուղևորվել է Ասորիք, եղել Ամիդ, Սամոսատ և Եդեսիա քաղաքներում, հայոց գրի մասին խորհրդակցել է ասորի հոգևորականների հետ, բայց, աջակցություն չստանալով, ինքն է ձեռնամուխ եղել այդ գործին: Մաշտոցի կենսագիր Կորյունի վկայությամբ՝ 405 թ-ին Եդեսիայում «նա իր սուրբ աջով հայրաբար ծնեց նոր ու սքանչելի ծնունդներ՝ հայերեն լեզվի նշանագրեր»:

Մաշտոցն անթերի որոշել է հայերենի բառակազմիչ հնչյունների իրական համակարգը՝ առաջնորդվելով մեկ հնչյունին՝ մեկ տառ սկզբունքով, դասավորել տառերը հունական այբուբենի հերթականությամբ, յուրաքանչյուր տառի տվել անուն (այբ, բեն, գիմ...), թվային արժեք (Ա = 1, Ժ = 10, Ճ = 100, Ռ = 1000...), սահմանել գրության՝ ձախից աջ ուղղությունը: Մաշտոցյան կատարյալ այբուբենին միջնադարում ավելացվել են միայն «օ» և «ֆ» տառերը:

Գրերն ստեղծելուց հետո Մաշտոցը մեկնել է Սամոսատ, հմուտ գրիչ-գեղագիր Հռոփանոսի օգնությամբ կատարելագործել դրանց գծագրությունը: Նոր տառերն ուսուցանել է իր օգնականներին և այնտեղ հունական կրթություն ստացող հայ պատանիներին, իսկ 2 աշակերտների՝ Հովհան Եկեղեցացու և Հովսեփ Պաղնացու հետ ձեռնարկել է Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը՝ սկսելով Սողոմոնի առակներից:

406 թ-ին նորաստեղծ գրերով Մաշտոցը վերադարձել է Հայաստան: Նրան մեծ ցնծությամբ են դիմավորել Վաղարշապատ մայրաքաղաքում:

Գրերի գյուտից անմիջապես հետո երկրում ծավալվել է Թարգմանչաց շարժումը, ծաղկել է հայ դպրությունը, հիմնվել են բազմաթիվ դպրոցներ, գրադարաններ, գրչության կենտրոններ:

Կորյունի վկայությամբ՝ Մաշտոցը նշանագրեր է ստեղծել նաև վրացիների ու աղվանների համար:

Բացի թարգմանական գործերից՝ Մեսրոպ Մաշտոցը գրել է մայրենի լեզվով առաջին հոգևոր բանաստեղծություններն ու երգերը՝ դնելով հոգևոր երգեցողության հիմնաքարը, նաև ճառեր, քնարական բանաստեղծություններ, քարոզներ և ուղերձներ: Մաշտոցի ու նրա աշակերտների գործունեությամբ սկզբնավորվել է հայոց ոսկեդարի (V դար) վիթխարի գրական-մշակութային շարժումը:

Մեսրոպ Մաշտոցը սրբացվել է դեռևս կենդանության օրոք և դասվել Հայ եկեղեցու

տոնելի սրբերի կարգը: Տոնացույցում նրա անունը հիշատակվում է 3 շարժական տոներում: Օշականում Մաշտոցի գերեզմանի վրա կառուցված եկեղեցին սրբազան ուխտատեղի է: Սերունդները Մաշտոցին անվանել են Երկրորդ Լուսավորիչ Հայոց, որովհետև Գրիգոր Լուսավորիչը քրիստոնեացրել է հայ ազգը, իսկ Մեսրոպ Մաշտոցն ազգայնացրել է քրիստոնեությունը:

Մեսրոպ Մաշտոցի կյանքի և գործի մասին գրել են նրա աշակերտներ Կորյունն ու Մովսես Խորենացին, միջնադարյան մի շարք մատենագիրներ: Հետագայում նրա մասին գրվել են գիտական աշխատություններ, գեղարվեստական ստեղծագործություններ:

Մաշտոցի անունով կոչվել են Մատենադարանը, պողոտա և համայնք, ուսումնական հաստատություններ Երևանում, փողոցներ, դպրոցներ՝ ՀՀ-ում և ԼՂՀ-ում, հիմնարկներ ու կազմակերպություններ՝ ՀՀ-ում և Սփյուռքում:

Սահմանվել են ՀՀ «Սուրբ Մեսրոպ Մաշտոց», Հայ եկեղեցու «Սուրբ Սահակ-Սուրբ Մեսրոպ» շքանշանները:

2005 թ-ին մեծ շուքով նշվել է հայ գրերի գյուտի 1600-ամյակը:

Մեսրոպատառ առաջին հայերեն նախադասությունն է. ***«Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ» («Ճանաչել իմաստություն և խրատ, իմանալ հանճարի խոսքերը»):***

Մեսրոպ Մաշտոցի ստեղծած գիրը և ուղղագրությունը դարձան ամենից լիարժեքը ժամանակի մյուս գրային համակարգերի շարքում և չհնացան անցած 1600-ամյակում:

«Մտքով՝ ստեղծող, խոսքով՝ պայծառ, գործով՝ համբերող, սիրով՝ անկեղծ, սովորեցնելու մեջ՝ չձանձրացող, և որ նրա (Մեսրոպ Մաշտոցի) վարքի մեջ ամբարտավանությունը և մարդահաճությունը երբեք չկարողացան տեղ գտնել»:

Մովսես Խորենացի,
պատմահայր

«Մեսրոպ Մաշտոցի գյուտը, անտարակույս, այն հզոր զենքն էր, որի շնորհիվ հայ ժողովուրդը պահպանեց իր գոյությունը V դարի մեծ պայքարում և մտնելով քաղաքակրթված հնագույն ժողովուրդների ընտանիքի մեջ՝ զարգացրեց իր ինքնուրույն մշակույթն ու շատ հարուստ գրականությունը»:

Հակոբ Մանանդյան,
պատմաբան

https://www.encyclopedia.am/pages.php?bId=2&hId=1480







ԽՈՐՀՐԴԱՆԻՇՆԵՐ

Ինչո՞ւ ենք մենք հպարտանում մեր ազգային խորհրդանիշներով և ցավ ենք ապրում ու զայրանում, երբ որևէ մեկը փորձում է նսեմացնել կամ անարգել դրանք:

Օրինակ, բոլորս գիտենք, որ ազգային դրոշը խորհրդանիշ է, և մենք հարգանքով ու հպարտությամբ ենք վերաբերում նրան ոչ թե նրա նյութական կառուցվածքի և գեղեցկության, այլ այն բովանդակության պատճառով, որ ներկայացնում է: Տվյալ դեպքում դրոշը մեր կողմից դիտվում և ընկալվում է որպես իշխանության, պետականության, արժանապատվության, պատմության և բազմաթիվ այլ գաղափարների խտացված արտահայտություն, ուստի որևէ մեկի կողմից դրոշն անարգելը վիրավորանք է:

Ի՞նչ է խորհրդանիշը

Յուրաքանչյուր ազգի մշակույթի, հոգեբանական առանձնահատկությունների մեջ կարևոր տեղ են գրավում խորհրդանիշները, որոնց իմացությունը անհրաժեշտ է ինչպես սեփական ժողովրդին ու հայրենիքը ճանաչելու, այնպես էլ ինքնաճանաչման առումով:

Ազգի ձևավորման (էթնոգենեզի) ընթացքում, տվյալ ազգին բնորոշ աշխարհզգացողության, աշխարհընկալման միջոցով ստեղծվում են այդ ազգին առանձահատուկ խորհրդանիշները (սիմվոլները), որոնք հանդես են գալիս նաև իբրև տարբերանշաններ: Սրանց միջոցով այդ ազգը նաև առանձնանում է մյուսներից: Որպես խորհրդանիշներ կարող են հանդես գալ ազգի կենսագործունեության միջավայրը, այն տարածքը, որի վրա ընթացել է և շարունակում է ընթանալ էթնոսի, ապա նաև ազգի ծագումն ու կազմավորումը, լեզուն, մարդաբանական առանձնահատ-կությունները, կրոնական հավատալիքները և այլն:

Բավական է նայել այդ նշաններին և իսկույն կհասկանանք, թե ինչ ազգի կամ մշակույթի հետ գործ ունենք: Եթե, օրինակ, որևէ նկարի վրա տեսնում ենք Գրիգոր Լուսավորիչի կամ Էջմիածնի պատկերը, ապա միանգամից հասկանալի է դառնում, որ դրանք հայ հոգևոր-ազգային արժեքներն են: Հարկ է նշել, որ այդ ճանաչումը կատարվում է միայն այն դեպքում, եթե մենք վաղօրոք գիտենք, թե այդ խորհրդանիշները որ ազգինն են:

Խորհրդանիշը նաև որևէ գաղափարի, կառույցի, էության ոգեղեն կամ նյութական արժեքի խտացված արտահայտությունն է, արտացոլում է տվյալ ժողովրդի (տեսակի) ժառանգական հիշողությունը և ազգային ավանդույթները:

Սեփական խորհրդանիշների համակարգ կարող են ունենալ տոհմերը, իշխանական տները, սոցիալական խմբերը, քաղաքները, գյուղերը, քաղաքական կուսակցությունները, և այլն: Օրինակ, դուք գիտեք, որ իշխանական տներն ունեին իրենց սեփական դրոշն ու զինանշանը, օրհներգը և այլն:









Ազգային խորհրդանիշներ

Խորհրդանիշներն ըստ բնույթի լինում են բարոյակերպարային, պատմական, աշխարհագրական և ազգայինպետական:

Հայոց ազգային արժեհամակարգում բարոյակերպարային հատկանիշներ կրող խորհրդանիշներից են՝ Խաչը, Կեռխաչը կամ Արևխաչը (սվաստիկան), հավերժական պտույտը խորհրդանշող

ութաթև աստղը, հայոց Այբուբենը, «Սասնա ծռեր» դյուցազներգությունը, քրիստոնեական հավատի, հայոց պատմության և մշակույթի դասական այլ արժեքներ:

Խաչ

Խաչը քրիստոնեության խորհրդանիշն է, պաշտամունքի և երկրպագության առարկան:

Խաչը օգտագործվել է դեռևս նախաքրիստոնեական ժամանակներում: Այն խորհրդանշել է աշխարհի նյութականության չորս հիմնական տարրերը՝ հողը, օդը, ջուրը, կրակը, ինչպես նաև աշխարհի չորս կողմերը և մարդուն: Շնորհիվ իր այս ընդհանրական իմաստի Խաչի նշանները տարածված են եղել Հայկական լեռնաշխարհում, Միջագետքում, Եգիպտոսում, Պաղեստինում, Չինաստանում, Հնդկաստանում և այլուր:

Հռոմեական կայսրությունում գերաններից պատրաստված խաչը իշխանություններն օգտագործել են որպես մահապարտներին խաչելու դաժան պատժամիջոց: Խաչի անարգ մահը կրեց Հիսուս Քրիստոսը:

Քրիստոնյաները խաչը հռչակեցին տառապանքի միջոցով մարդկության մեղքերի քավության, փրկության և հավիտենական կյանքի խորհրդանշան: Այն Հիսուս Քրիստոսի, ինչպես նաև քրիստոնեության կարևոր խորհրդանիշն է:

Խաչի պաշտամունքը առավելագույն չափով տարածվեց Հայոց մեջ հատկապես Հիսուսի Խաչափայտի գերեդարձից հետո, երբ Բյուզանդիայի Հերակլ կայսրը 628 թ. հաղթելով պարսիկնե-րին, Խաչը հանդիսավորապես բերեց և հաստատեց Երուսաղեմում: Խաչի նկատմամբ պաշտամունքը Հայոց եկեղեցին վավերացնում է այն աստվածաբանական հիմնավորումով, որ Քրիստոս-Աստծու խաչելությամբ Խաչն ինքը սրբացած է: Հայոց եկեղեցին հաստատել է նաև Խաչի օրհնությունն ու օծումը: Խաչը զարդարել է հայկական եկեղեցիների խորշերը, դրվել տաճարների տանիքին և գմբեթին:

Ոչ միայն խաչը, այլև եկեղեցական անոթները, սպասքեղենը, զգեստները և այլ պարագաներ խորհրդանշում են հոգևոր, աստվածաբանական գաղափարներ: Ըստ մեկնիչների, օրինակ, բուրվառը խորհրդապատկերն է Աստվածածնի, որովհետև ինչպես վերջինս է իր մեջ կրում ոգեղեն կրակին՝ Քրիստոսին, այնպես էլ բուրվառը: Կանթեղները և ջահերը, որոնք գտնվում են եկեղեցու վարագույրի արտաքին կողմում, ցույց են տալիս արտաքին, նյութական աշխարհի երկնակամարում շողացող լուսատուներին: Մկրտության ավազանը մատնանշում է չորս կարգի իրողություն. ջրհեղեղ (մեղքերից ձերբազատում), Կարմիր ծով (անցում դեպ նոր կյանք), հայրական շնորհ, Մայր եկեղեցու արգանդ, որի մեջ վերստին ծնվում է մկրտվողը: Նվազ հետաքրքիր չէ զգեստների խորհրդա-բանությունը. վեղարը սրածայր գլխադիր է, որ կրում են բացառապես Հայոց եկեղեցու կուսակրոն հոգևորականները. այն հիշեցնում է մեր եկեղեցիների դեպ երկինք միտվող սրածայր գմբեթները: Հնում այն բրդյա էր (այսօր մետաքսից է) և, որպես աշխարհի համար մեռած լինելու նշանակ, օգտա-

գործում էին ճգնակյաց անապատականները: Ուրարը ձախ ուսից վար իջնող լայն ժապավեն է. մոտիկ լինելով սրտին, այն խորհրդանշում է սրտանց Տիրոջ Խաչը կրելը կամ կրելու պատրաստակամությունը:

Կեռխաչ

Կեռխաչը (սվաստիկա, որը սանսկրիտերենից (հին հնդկերեն) թարգմանաբար նշանասկում է su + asti = լավ լինել) իրենից ներկայացնում է խաչի թևերի ծայրերը ուղիղ անկյան տակ, երբեմն կորությամբ աջ կամ ձախ ծռված խաչ: Այն աղերսներ ունի արևի ու կրակի պաշտամունքի հետ: Եվ քանի որ արևի աստվածը համարվում էր կյանք ու պտղաբերություն տվողը, կեռխաչն էլ դառնում է կյանքի, պտղաբերության, երջանկության և հայոց առաքելության հավիտենական խորհրդանիշը, կյանքի էմբլեմը: Կեռխաչն իր ձևերով անընդհատ շարժման տպավորություն է ստեղծում՝ խորհրդանշելով հենց արևի շարժումը:

Ութաթև կեռխաչը կամ աստղը հին հայերի համար հավերժության խորհրդանիշն էր և մեզ ուղեկցում է անհիշելի ժամանակներից:

Հայկական լեռնաշխարհում ութաթև կեռխաչեր հանդիպում են հնագույն ժայռապատկերներում: Այն՝ լինելով բրոնզեդարյան ժամանակաշրջանի հիմնական զարդանախշերից մեկը՝ պատկերվել է զանազան առարկաների՝ կավամանների, բրոնզե գոտիների, գնդասեղների, դաշույնների, զենք ու զրահի և այլնի վրա:

Հայաստանի ժայռապատկերներում հայտնաբերվել են երկու մարդու կերպարանքով կեռխաչերի հնագույն օրինակներ:

Այբուբեն

Հայոց այբուբենը ազգային խորհրդանիշների ավիշն է: Մեսրոպ Մաշտոցն աստվածային զորությամբ գտավ, անգոյությունից գոյության կոչեց տառերը, որոնք իբրև անպարտելի զինվորներ պահպանում են մեր ազգի ինքնությունը:

«Սասնա ծռեր» դյուցազնավեպը այն ստեղծագործությունն է, որը պետք է ուղեկցի հայ մարդուն ողջ կյանքում: Էպոսը ոչ միայն ազգի նկարագրի, անցած ուղու վավերագրումն է, այլև նրա ցանկությունների, ձգտումների, նպատակների արտահայտությունը:

Օտարները, հետևելով մեր ժողովրդին, նկատում են, որ նա աշխատասեր, խաղաղասեր ժողովուրդ է: Սակայն, երբ նեղացնում են այդ ժողովրդին, նա դառնում է «խենթ», «ծուռ», անճանաչելի: Յուրաքանչյուր հայ իր նկարագրով մի Դավիթ է և կռվի է դուրս գալիս, երբ դանակը ոսկորին է հասնում: Նա կարող է թշնամուն մեծահոգաբար զարկ բաշխել, բայց կհաղթի, որովհետև ուժեղ է, ազնիվ ու ազատատենչ: Էպոսը խոհեմ, զգոն լինելու, հայրական ժառանգությամբ հզորանալու, ինչպես նաև թշնամու դավերից խուսափելու խորհուրդ է:

Պատմա-աշխարհագրական խորհրդանիշներ

Ազգային խորհրդանիշների մեջ յուրահատուկ տեղ են զբաղեցնում պատմա-աշխարհագրական խորհրդանիշները, որոնք արտացոլում են հայոց անցած ճանապարհը, այդ ընթացքում արձանագրված ևԲ հաղթանակները, ևԲ պարտությունները: Այս խորհրդանիշները արտահայտում են հայրենիքի անկրկնելիության, անփոխարինելիության, ազգային պատկանելության զգացողություն: Դրանք իրենց հերթին լինում են մտապատկերային, առարկայական, մշակութային և կենդանական-բուսական:

Մտապատկերային խորհդանիշը առնչվում է ազգային արժանապատվությանը և գենետիկ հիշողությամբ փոխանցվում է սերնդե սերունդ: Լավ ու հաղթական մտապատկերային հիշողություններ են արթնացնում հայկական բերդերը, հերոսամարտերի վայրերը, պաշտամունքային տաճարները կամ հակառակը, տխուր հիշողություններ են առաջացնում Հայոց ցեղասպանության հուշակոթողը, Եռաբլուրը և այլն:

Մտապատկերային խորհրդանիշներ են Հայկ Նահապետը, Արամ, Արտաշես I, Տիգրան II Մեծ, Տրդատ III արքաները, Սահակ Պարթևը, Մեսրոպ Մաշտոցը, Կոմիտասը, Գարեգին Նժդեհը, Անդրանիկը և ուրիշներ:

Առարկայական խորհրդանիշը նյութականացված արժեք է՝ սար, լիճ, տաճար, խաչքար, մագաղաթ և այլն, որը պատմում է անցյալի լավ ու վատ անցքերի մասին: Երկգագաթանի Մասիսը առարկայական խորհրդանիշ է և յուրաքանչյուր հայի համար նվիրական արժեք: Առարկայական համապարփակ խորհրդանիշ է Հայկական լեռնաշխարհը:

Մշակութային խորհրդանիշներ են հայ երգը, պարը, խոսքը և այլն:

Կենդանական (տոտեմիստական) խորհրդանիշները դարձել են ազգային պետական խորհրդանիշների տարր: Օրինակ, խոյը, առյուծը, արծիվը, ցուլը և այլն:

Բուսական խորհրդանիշներ են ծիրանը, խաղողը, նուռը, ցորենի հասկը և այլն:

Ազգային պետական խորհրդանիշներ

Ազգերի կյանքում մեծ նշանակություն ունեն Ազգային-պետական խորհրդանիշները՝ դրոշը, օրհներգը, զինանշանը և այլն:

«Դրոշ» բառն առաջացել է դրոշմել (քանդակել) բայից: Հայաստանում դրոշի օգտագործման վերաբերյալ ամենավաղ տեղեկությունը կապված է Հայկ Նահապետի ավանդության հետ: Հայկը, հաղթելով Բելին, իր դրոշը պարզեց մի ժայռի վրա, որը հետագայում կոչվեց Հայկաբերդ:

Հայաստանում յուրաքանչյուր թագավորական տուն և նախարարություն ուներ իր առանձին դրոշը: Սակայն մեր հին մատենագիրները աղոտ տեղեկություն են հաղորդում թագավորական տների և առանձին նախարարությունների դրոշների գույնի, չափի և ձևի մասին: Հայտնի է միայն, որ Արտաշեսյանների ու Արշակունիների ծիրանագույն աղեղնադրոշի վրա եղել է երկու արծիվ, իսկ մեջտեղում՝ արևի նշան: Մամիկոնյան նախարարության դրոշի վրա պատկերված էր արծիվ և աղավնի: Բագրատունիների դրոշի վրա պատկերված է եղել մեկ արծիվ: Կիլիկիայում, 1198 թ., երբ Լևոն II-ը օծվեց թագավոր, Հռոմի պապը նրան ուղարկեց մի նոր սպիտակ դրոշ, որի վրա նկարված էր կարմիր առյուծ՝ թաթերը վեր բարձրացրած: Հետագայում, Լուսինյանների օրոք դրոշը փոխվեց և դարձավ եռագույն (կարմիր, կապույտ, դեղին):

Լևոն VI-ի մահից հետո հայոց թագավորության ժառանգ համարվեցին Կիպրոսի Լուսինյան-ները: Նրանք Կիլիկիայի հայ թագավորների տիտղոսները միացրին իրենց անվանը: 1519 թ. նոյեմբերի 19-ին Տարսոնի Մատթեոս արքեպիսկոպոսը Հայաստանի անվանական թագավոր օծեց Կիպրոսի Հովհաննես II Լուսինյան թագավորին, իսկ Կիպրոսի Լուսինյան դրոշակն էլ իր մեջ առավ հայոց դրոշակի գույները և դարձավ սպիտակ, կապույտ, կարմիր և դեղին:

1773 թ. լույս տեսած Շ. Շահամիրյանի «Որոգայթ փառաց»-ում նկարագրված է հայկական պետության ապագա դրոշը՝ կարմիր, կապույտ և դեղին՝ ստեղծվելիք բանակի երեք սպարապետությունների զինվորների համազգեստների գույներին համապատասխան:

1789 թ. Հովսեփ արք. Արղությանը և Հ. Լազարյանը ռուսական կառավարությանը ներկայացրին մի հիշատակագիր, որի մեջ հայոց դրոշի գույները ներկայացնում էին կարմիրը, կանաչը և կապույտը՝ Նոյան տապանի նշանով:

1885 թ. Փարիզի հայ ուսանողական միությունը, որը Վիկտոր Հյուգոյի թաղման արարողությանը ուզում էր մասնակցել հայ ազգային դրոշով, դիմում է Ղ. Ալիշանին և հարցնում նրան հայկական դրոշի գույները: Ալիշանը հայտնում է, թե հայոց դրոշի գույներն են՝ կարմիրը, կանաչը, սպիտակը:

Հայաստանի Առաջին Հանրապետությունը, չընդունելով Ալիշանի կողմից ընտրված դրոշի գույների դասավորությունները, ընդունում է Ռուբինյանների թագավորության վերջին շրջանի գույները՝ կարմիրը, կապույտը, նարնջագույնը: Գույների այս դասավորությամբ դրոշը նաև ներկայիս Հայաստանի Հանրապետության պետական դրոշն է:

Զինանշան

Զինանշանը՝ այն կրողի պատմական ավանդույթներն արտահայտող պատկերների ու առարկաների համադրությամբ խորհրդանշանային ժառանգական տարբերանշանն է:

Զինանշանները յուրահատուկ են պետությանը, ազնվական կամ իշխանական տներին, վարչա-տարածքային միավորներին, քաղաքներին, համքարություններին, երբեմն նաև առանձին անձանց և արտացոլում են դրանց վարչական, աշխարհագրական, տնտեսական, կենցաղային, անհատական և այլ առանձնահատկությունները: Զինանշանները պատկերված են լինում կնիքների, դրամների, մեդալների, դրոշների, ռազմի առարկաների, ճարտարապետական հուշարձանների և այլնի վրա:

Հայոց պատմության մեջ կցկտուր տեղեկություններ են պահպանվել հայկական զինանշանի վերաբերյալ: Հայտնի է, որ արքայական և նախարարական դրոշների վրա ագուցված էին այլևայլ կենդանիների՝ վիշապի, արծվի, առյուծի պատկերներ, իսկ քրիստոնեության ընդունումից հետո՝ խաչ, դաստառակ, Ս. Էջմիածին և այլն:

Արտաշեսյանների օրոք ազգային զինանշանը եղել է արծիվը: Արշակունիների օրոք զինանշան է դառնում երկու արծիվը, որոնց կենտրոնում պատկերված էր արև:

Հայտնի են Արծրունիների՝ մագիլներում թռչուն կրող արծվի և Մամիկոնյանների՝ մագիլներում գառ բռնած երկգլխանի արծվի պատկերով զինանշանները: Գրեթե նույն տեսքն ունի Վաչուտյանների զինանշանը:

Բագրատունիները ժառանգություն են վերցնում արծվի զինանշանը: Կիլիկիայի հայկական իշխանության ժամանակ գործածության մեջ է մտել խաչի և բերդի վանդակավոր դռան համադրությամբ զինանշանը: Իսկ Կիլիկիայի հայկական թագավորության դրոշի վրա ներկայացված է եղել թագակիր առյուծի պատկերով զինանշանը:

Հայաստանի երրորդ հանրապետության օրենքը զինանշանի մասին ընդունվել է 1992 թ. ապրիլի 19-ին: Այդ օրենքի համաձայն 1920 թ. հուլիսին ընդունված ճարտարապետ Ալ. Թամանյանի և նկարիչ Հ.Կոջոյանի հեղինակած զինանշանը ընդունվել է ՀՀ պետական զինանշան:

Հայկական զինանշանների մասերն են.

1. Յոթ գլխանի վիշապը - Տիգրան Երվանդյանի խորհրդանիշն էր, որը սպանեց մարաց Աժդահակին:

2. Մի գլխանի արծիվը - Արտաշեսյանների հարստության, իսկ երկգլխանի արծիվը՝ Մամիկոնյանների խորհրդանիշն էր: Արծիվը վաղ ժամանակներից ի վեր արտահայտում է բարձրությունը, բարձրից տիրելու և հովանավորելու գաղափարը:

3. Դաստառակ կամ թաշկինակ - խորհրդանշում է Հայաստանի քրիստոնեացումը:

4. Գառնուկը - խորհրդապատկերն է Հիսուս Քրիստոսի, որն Աստծու գառն է:

5. Խաչազարդ թագը - խորհրդանշանն է քրիստոնյա Հայաստանի թագավորության:

6. Առյուծը - խորհրդանիշն է Ռուբինյան թագավորության, իսկ առյուծի թաթի մեջ եղած սուրը նշանակում է իշխանության: Սուսերակիր առյուծը ակնարկում է հայկական տիրապետության հզորությունը Կիլիկիայի մեջ:

7. Մեծ ու փոքր Մասիսները - խորհրդանշում են հայկական կամ Արարատյան թագավորությունը, հայ ժողովրդի ավանդական օրրանը: Մասիս լեռը տիրում է ողջ Հայաստանի վրա և հովանավորելով հայկական սրբություններն ու իրավունքները, իմաստավորում է Հայաստանի անխախտ մշտնջենավորությունը*: Մասիս սարի վրա պատկերված Նոյան տապանը խորհրդանշում է Աստվածաշնչյան ջրհեղեղի հիշատակը: Էջմիածնի տաճարը, որ գտնվում է Մասյաց հովանու ներքո, հիշեցնում է հայոց հոգևոր-ազգային կենտրոնի, հայերի համար առաջին սրբավայրի հիմնարկությունը և շինությունը:

8. Կապարճը, աղեղը, նիզակները - խորհրդանշում են իրավունքի, պաշտպանության և իշխանության պահպանման միջոցները, այսինքն՝ զենքի ուժը:

Օրհներգ

Պետական օրհներգը ազգային, վեհ, խրոխտ երաժշտության, անցյալը, ներկան և ապագան կապող հայրենասիրության, նվիրումի մղող և լուսավոր ապագայի հույս ներշնչող երգ-բանաստեղծություն է:

Դրամը

Ազգային դրամը տնտեսությունը կազմակերպելու միջոց է: Պետության համար սեփական դրամի շրջանառության տարածք ունենալը՝ անկախ, ինքնավար լինելու անհրաժեշտ պայման է: